ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ -15/16/2016/4>>

ք. Երևան << 11 >> հոկտեմբերի 2016 թ.

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Թուփչյանի, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «Մեդիսար» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Գաբրիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են — օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 3989000 **(երեք միլիոն ինը հարյուր ութսունինը հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում հավելված 1-ով սահմանված ժամկետները:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ____օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Ակադեմիկոս է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան 0051,Կոմիտաս 49/4	ք. Երևան, Գետառի 4/9
«Ամերիա Բանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570015951390100	ՀՀ 2050022415811001
ՀՎՀՀ 02500292	ՀՎՀՀ 02558635
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<< 11 >> հոկտեմբերի 2016 թ. կնքված
N <<ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ -15/16/2016/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ և ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չ/Հ	անունը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	Միավորի գինը	Երաշխիքային ժամկետը	Պիտանելիության ժամկետը
1	2	3	4	5			
1	Մեմբրանային ֆիլտրացիոն համակարգի ստորին միաց-նող հատվածը (Bottom part with ground-in sleeve NS 45)	Մեմբրանային ֆիլտրացիոն համակարգի ստորին միացնող հատվածը - NS 45: Պատրաստված ապակուց: Նախատեսված GV 050/2 վակուումային ֆիլտրացիոն համակարգի համար: <<Կարլ Ռոթ>> H428.1	հատ	4	100000	-	-
2	Պետրիի թաս պլաստիկ	Ստերիլ, թափանցիկ, 94մմ շրջագծով, բարձրությունը 16մմ: Հարթ հատակով, հատակային մակերեսի բարձր կայունությամբ: Նախատեսված բարձր ջերմաստիճանի ազարի հետ աշխատանիք համար: Տուփում 480 հատ (20հատ x 24 փաթեթ): <<Կարլ Ռոթ>> PX82.1:	տուփ	5	50000	-	-
5	Պինցետ	Մատակարարվող ապրանքը համապատասխանում է ГОСТ 21241-89 :	հատ	10	2800	-	-
6	Լանցետ	Լայնաշեղբ: Երկարությունը 150մմ:	հատ	10	1500	-	-
8	Ծայրակալների հավաքածու	Պոլիէթիլենային, 200մկլ: 3000 հատ: Պոլիէթիլենային, 1000մկլ: 3000 հատ	հավաքածու	1	33000	-	Ապրանքն ընդունելու օրվա դրությամբ մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %-ից
9	Փորձանոթ ցենտրիֆուգայի 10մլ	Փորձանոթ ցենտրիֆուգայի 10մլ, Պոլիէթիլենային, չափիչ նիշերով և կափարիչով:	հատ	600	78.33	-	
12	Հավանգակոթ ГОСТ 9147-80 N-2	Հավանգակոթ N-2 համարի ըստ ГОСТ 9147-80-ի:	հատ	7	1300	-	-
13	Հավանգակոթ ГОСТ 9147-80 N-3	Հավանգակոթ N-3 համարի ըստ ГОСТ 9147-80-ի:	հատ	3	1300		
14	Պղտորաչափ (Densi-LA-Meter)	Densi-LA-Meter սարք: Իր բոլոր աքսեսուարներով:	հատ	1	690000	Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 365 օր	

16	Մակրոպիպետի մեմ-բրանային ֆիլտր	BRAND... macro pipette controller membrane filters 3 µm :Տուփում 10հատ: Sigma-Aldrich, Z333948	տուփ	1	27000		Ապրանքն ընդունելու օրվա դրությամբ մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %-ից
17	Միխցային ֆիլտր	Whatman... Puradisc 25 TF syringe filters 0.45 µm, PTFE, 50/pk : Sigma-Aldrich WHA67842504	տուփ	1	88000		
18	pH-մետրի էլեկտրոդ Hanna HI1131B	pH-մետրի էլեկտրոդ Hanna HI1131B :	հատ	2	85000	Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 365 օր	
19	Ջերմաչափ սառնարանային	Ջերմաչափ TC-7-M1 исп. 1: -30-+30C, վերին հատվածի երկարությունը՝ 160մմ, ներքևի հատվածի երկարությունը՝ 103մմ: Համապատասխանի ТУ 25-2022.0006.90:	հատ	10	2000		
20	Կաթոցիչ 3.3մլ	Պաստերի կաթոցիչ, պատրաստված է թափանցիկ LDPE, մանրէազերծ ՝ 20 հատ տուփում, ճշգրիտ ձևի, չկոտրվող, ոչ թունավոր, կաթիլի չափի հսկողությամբ, ծավալը 3,3մլ, կաթիլի չափը 40մկլ, երկարությունը 155մմ: Եվրոպական սերտիֆիկացմամբ <<Կարլ Ռոթ>> EA60.1:	տուփ	2	25000	-	Ապրանքն ընդունելու օրվա դրությամբ մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %-ից
23	Լվացման պլաստմասե ամանների հավաքածու	Պլաստիկ աման 500 մլ: Ծայրակալով: 10 հատ: Նախատեսված մեթանոլի և էթանոլի համար: Պլաստիկ աման 1000 մլ: Ծայրակալով: 10 հատ: Նախատեսված մեթանոլի և էթանոլի համար:	հավաքածու	1	27000		
24	Ջերմաչափ խոնավաչափ պատի	TFA 30.5002 Electronic Thermo-Hygrometer :	հատ	10	12000	Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 365 օր	
25	Խոզանակների հավաքածու՝	Խոզանակ անոթներ մաքրելու համար, փափուկ, չքերող, պատրաստված է բնական մանրաթելից, բարձր կայունությամբ քիմիական նյութերի և ջերմաստիճանի (մինչև 150 0C) հանդեպ, երկարությունը 500մմ, մաքրող մասի երկա-ությունը 150մմ: Տրամագիծը 80 մմ: տուփում 5 հատ: 2 տուփ: <<Կարլ Ռոթ>> 2017.1: Խոզանակ նեղ անոթներ մաքրելու համար, փափուկ, չքերող, պատրաստված է բնական մանրաթելից, բարձր կայունությամբ քիմիական նյութերի և ջերմաստիճանի	հավաքածու	1	185000		

		(մինչև 150 0C) հանդեպ, երկարությունը 480մմ, մաքրող մասի երկարությունը 120մմ: Տրամագիծը 60 մմ: տուփում 5 հատ: 2 տուփ: <<Կարլ Ռոթ>> 1850.1 : Խոզանակ նեղ անոթներ մաքրելու համար, փափուկ, չքերող, պատրաստված է բնական մանրաթելից, բարձր կայունությամբ քիմիական նյութերի և ջերմաստիճանի (մինչև 150 0C) հանդեպ, երկարությունը 370մմ, մաքրող մասի երկարությունը 85մմ: Տրամագիծը 50 մմ: տուփում 10 հատ: 1 տուփ: <<Կարլ Ռոթ>> 2013.1: Խոզանակ նեղ անոթներ մաքրելու համար, փափուկ, չքերող, պատրաստված է բնական մանրաթելից, բարձր կայունությամբ քիմիական նյութերի և ջերմաս-տիճանի (մինչև 150 0C) հանդեպ, երկարությունը 500մմ, մաքրող մասի երկարությունը 100մմ: Տրամագիծը 6 մմ: տուփում 10 հատ: 1 տուփ: <<Կարլ Ռոթ>> 2002.1: Խոզանակ նեղ անոթներ մաքրելու համար, փափուկ, չքերող, պատրաստ-ված է բնական մանրաթելից, բարձր կայունու-թյամբ քիմիական նյութերի և ջերմաստիճանի (մինչև 150 0C) հանդեպ, երկարությունը 160մմ, մաքրող մասի երկարությունը 70մմ: Տրամագիծը 10 մմ: տուփում 5հատ: 2 տուփ: <<Կարլ Ռոթ>> KE65.1:					
26	Մեմբրանային վակումային պոմպ	**НИРА НВМ 1,6 տիպի:**	հատ	2	100000	Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 365 օր	
28	Բյուքս 45X45սմ	CB-24/10 տիպի: Բորոսիլիկատային ապակուց, շլեյֆ բերանով, կափարիչով, արտաքին տրամագիծը 30մմ,բարձրությունը 50մմ, ջերմակայուն և քիմիապես կայուն:	հատ	10	1300		
30	Բաժանիչ ձագարների	Բաժանիչ ձագար 125մլ: Պատրաստված քիմիապես կայուն ապակուց, շլիֆ բերանով, բերանի արտաքին տրամագիծը 26մմ, ներքինը 19մմ, քիմիապես կայուն:Ապակյա խցանով 10 հատ: Բաժանիչ ձագար 250մլ: Պատրաստված քիմիապես կայուն ապակուց, շլիֆ բերանով, բերանի արտաքին տրամագիծը 26մմ, ներքինը 19մմ, քիմիապես կայուն: Ապակյա խցանով: 10 հատ:	հավաքածու	1	90000		

34	Չափիչ Գլանների հավաքածու	Չափիչ Գլան 5 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 0,1 ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 0.05մլ: Ներառի համապատասխանության, Ներառի USP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 12 հատ: Omnilab 5276071 կամ Carl Roth Y303.1: Չափիչ Գլան10 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 0,2ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 0.1մլ: Ներառի համապատասխանության: 12 հատ: Ներառի USP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ:Carl Roth Y304.1 Չափիչ Գլան 25 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 0,5ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 0.25մլ: Ներառի համապատասխանության և ներառիUSP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 12 հատ:Carl Roth Y305.1 Չափիչ Գլան 50 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 1.0ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 0.5մլ: ներառիUSP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 12 հատ: Carl Roth Y306.1 Չափիչ Գլան 100 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 1ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 0.5մլ, : ներառիUSP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 12 հատ: Carl Roth Y307.1 : Չափիչ Գլան 250 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 2ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 1 մլ: ներառիUSP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 6 հատ: Carl Roth Y308.1 Չափիչ Գլան 500 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով 5ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 2.5մլ: ներառիUSP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 6 հատ:Carl Roth Y309.1	հավաքածու	1	700000		

		Չափիչ Գլան 1000 մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց չափիչ նիշերով10ml:, A դասի ճշտությամբ , ճշգրտությունը ° 5մլ: ՆերառիUSP և ISO 17025 խմբաքանակի սերտիֆիկատ: 6 հատ: Carl Roth Y310.1					
35	Բաժակների հավաքածու	250մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն ապակուց, չափիչ նիշերով: H-1-250 TXC տիպի, համապատասխանում է ГОСТ 25336-82 ստան-դարտին և ներառում է համապատասխանության սերտիֆիկատ: Համապատասխանում է ճշգրտության առաջին աստիճանին: 20 հատ: 400մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն ապակուց, չափիչ նիշերով: H-1-400 TXC տիպի, համապատասխանում է ГОСТ 25336-82 ստանդարտին և ներառում է համապատաս-խանության սերտիֆիկատ: Համապատասխանում է ճշգրտության առաջին աստիճանին: 20 հատ: 100մլ: Պատրաստված ջերմա և քիմապես կայուն ապակուց, չափիչ նիշերով: H-1-100 TXC տիպի, համապատասխանում է ГОСТ 25336-82 ստանդարտին և ներառում է համապատասխանության սերտիֆիկատ: Համապատասխանում է ճշգրտության առաջին աստիճանին: 20 հատ:	հավաքածու	1	70000		
36	Պետրի թաս ապակյա -100մմ տրամագծով	Պետրի թասիկ, ապակյա 100մմ տրամագծով:	հատ	20	500		
37	Ֆազայի շշերի հավաքածու	<<Դյուրան>> ապակուց, հարթահատակ, քառակուսիկ, չափիչ նիշերով, ջերմակայուն /-40 մինչև +140°C/, ավտոկլավով ախտահանման ենթակա, ուղիղ վզիկով, վզիկի տրամագիծը 45մմ, պլաստիկե կափարիչով՝ GL45 տիպի, 1000մլ տարողություն, <<Կարլ Ռոթ>> P773.1 : 10 հատ տուփում: 1տուփ: <<Դյուրան>> ապակուց, հարթահատակ կլոր, չափիչ նիշերով, ջերմակայուն /-40 մինչև +140°C/, ավտոկլավով ախտահանման ենթակա, ուղիղ վզիկով, վզիկի տրամագիծը 45մմ, պլաստիկե	հավաքածու	1	180000		

		կափարիչով՝ GL45 տիպի, 2000մլ տարողություն, <<Կարլ Ռոթ>> : 5 հատ:					
38	Բյուքս CH - 85/15 (ГОСТ 25336-82)	CH-85/15 տիպի: Բորոսիլիկատային ապակուց, շլեյֆ բերանով, կափարիչով, արտաքին տրամագիծը 82 մմ,բարձրությունը 50մմ, ջերմակայուն և քիմիապես կայուն:	հատ	10	1300		
39	Կոլբա սննդային միջավայրերի համար 200մլ	<<Դյուրան>> ապակուց, հարթահատակ, չափիչ նիշերով, ջերմակայուն, ավտոկլավով ախտահանման ենթակա, Էյլենմեյերի ձևի, ուղիղ վզիկով, վզիկի տրամագիծը 38մմ, մետաղական կափարիչի համար, 200մլ տարողություն, 10 հատ տուփում: <<Կարլ Ռոթ>>:L183.1	տուփ	2	100000		
41	Ռեագենտի նմուշառման համար նախատեսված միանգամայա օգտագործման ման	Միանգամյա օգտագործման, ռեագենտ վերցնելու համար նախատեսված հատուկ ման 25 մլ ծավալով: Պատրաստված պոլիէթիլենտերեֆտալատից, գույնը `սպիտակ, մանրէազերծ, ռեագենտի մինիմալ կորուստի սկզբունքով, ներսի կողմում չափիչ նիշերով: Չափերը 146x57x26(մմ): Տուփում 10 փաթեթ, յուրաքնչյուրում 10 հատ:Կարլ Ռոթ HT65.1:	տուփ	1	75000		
42	Էպենդորֆներ-2մլ	Կափարիչով, 2մլ տարողությամբ, բոլոր տիպի լաբորատոր հետազոտությունների համար: Չափիչ նիշերով: Պատրաստված պոլիպրոպիլենից: Կայուն -70՝C մինչև 121՝C ջերմաստիճաններում: Մանրէազերծման ենթակա: 500 հատ/ տուփ:	տուփ	2	5000		
44	Բյուրետ 10ml	Չափսը 10մլ: Պատրաստված բորոսիլիկատային 3,3 ապակուց , AS դասի ճշտության , հեղուկի տրման արագությունը,կարգավորվող 20-40 վ, ճշտությունը 0,02մլ,խմբաքանակի սերտիֆիկատի առկայությունը, համապատասխանությունը, USP, ISO 365 պահանջներին:Omnilab 5423680	հատ	10	15000		Ապրանքն ընդունելու օրվա դրությամբ մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %-ից

45	Բյուրետ 25ml	Չափսը 25 մլ Պատրաստված բորոսիլիկատային 3,3 ապակուց , A դասի ճշտության , հեղուկի տրման արագությունը,կարգավորվող 20-40 վ, ճշտությունը 0,05մլ,խմբաքանակի սերտիֆիկատի առկայությունը, համապատասխանությունը, USP, ISO 365 պահանջ-ներին: Գնորդին պետք է ներկայացնի որակի, ծագման երկրի մասին հավաստագրերը արտադրողի ձևաթղթով:Omnilab 5423681	հատ	5	15000		
46	Տարա ախտորոշման/100մլ	Պլաստմասսե անալիզի տարա 100մլ , ոչ ստերիլ	հատ	400	60		
54	Պաշպանիչ ակնոցներ	Պաշպանիչ ակնոցներ նախատեսված քիմիական լաբորատորիայում աշխատանքի համար: Պատրաստված պոլիկարբոնատից: Թափանցիկ ոսպնյակներով:	հատ	10	1600		

* Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4 հասցեով:

ԳՆՈՐԴ

«Ակադեմիկոս է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051, Կոմիտաս 49/4
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀԿՀՀ 02500292

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան, Գետառի 4/9
«Իսեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500224158 1001
ՀԿՀՀ 02555635

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<< 11 >> հոկտեմբերի 2016 թ. կնքված
N <<ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ -15/16/2016/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ և ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չ/Հ	Ապրանքի*				Ընդամենը	
	անունը	չափման միավորը	քանակը	Մատակարարման ժամկետը	քանակ	գին
1	2	4	5	7		
1	Մեմբրանային ֆիլտրացիոն համակարգի ստորին միաց-նող հատվածը (Bottom part with ground-in sleeve NS 45)	հատ	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 աշխատանքային օրվա ընթացքում	4	400000
2	Պետրիի թաս պլաստիկ	տուփ	5		5	250000
5	Պինցետ	հատ	10		10	28000
6	Լանցետ	հատ	10		10	15000
8	Ծայրակալների հավաքածու	հավաքածու	1		1	33000
9	Փորձանոթ ցենտրիֆուգայի 10մլ	հատ	600		600	47000
12	Հավանգակոթ ГОСТ 9147-80 N-2	հատ	7		7	9100
13	Հավանգակոթ ГОСТ 9147-80 N-3	հատ	3		3	3900
14	Պղտորաչափ (Densi-LA-Meter)	հատ	1		1	690000
16	Մակրոպիպետի մեմ-բրանային ֆիլտր	տուփ	1		1	27000
17	Մխոցային ֆիլտր	տուփ	1		1	88000
18	pH-մետրի էլեկտրոդ Hanna HI1131B	հատ	2		2	170000
19	Ջերմաչափ սառնարանային	հատ	10		10	20000
20	Կաթոցիչ 3.3մլ	տուփ	2		2	50000
23	Լվացման պլաստմասե ամանների հավաքածու	հավաքածու	1		1	27000
24	Ջերմաչափ խոնավաչափ պատի	հատ	10		10	120000
25	Խոզանակների հավաքածու	հավաքածու	1		1	185000
26	Մեմբրանային վակուումային պոմպ	հատ	2		2	200000

28	Բյուքս 45X45սմ	հատ	10		10	13000
30	Բաժանիչ ձագարների	հավաքածու	1		1	90000
34	Չափիչ Գլանների հավաքածու	հավաքածու	1		1	700000
35	Բաժակների հավաքածու	հավաքածու	1		1	70000
36	Պետրի թաս ապակյա -100մմ տրամագծով	հատ	20		20	10000
37	Ֆազայի շշերի հավաքածու	հավաքածու	1		1	180000
38	Բյուքս СН - 85/15 (ГОСТ 25336-82)	հատ	10		10	13000
39	Կոլբա սննդային միջավայրերի համար 200մլ	տուփ	2		2	200000
41	Ռեագենտի նմուշառման համար նախա-տեսված միանգամայա օգտագործման աման	տուփ	1		1	75000
42	Էպենդորֆներ-2մլ	տուփ	2		2	10000
44	Բյուրետ 10ml	հատ	10		10	150000
45	Բյուրետ 25ml	հատ	5		5	75000
46	Տարա ախտորոշման/100մլ	հատ	400		400	24000
54	Պաշպանիչ ակնոցներ	հատ	10		10	16000
	Ընդամենը					3989000

ԳՆՈՐԴ

«Ակադեմիկոս է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051,Կոմիտաս 49/4
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀԿՀՀ.02500292

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան, Գետառի 4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀԿՀՀ.02555635

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3

<< 11 >> հոկտեմբերի 2016 թ. կնքված
N <<ԴՓԿ-ՇՀԱՊՁԲ -15/16/2016/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ և ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի*			
	անունը	չափման միավորը	քանակը	Վճարման ժամկետը
1	2	4	5	7
1	Մեմբրանային ֆիլտրացիոն համակարգի ստորին միաց-նող հատվածը (Bottom part with ground-in sleeve NS 45)	հատ	4	Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 20 բանկային օրվա ընթացքում 100%
2	Պետրիի թաս պլաստիկ	տուփ	5	
5	Պինցետ	հատ	10	
6	Լանցետ	հատ	10	
8	Ծայրակալների հավաքածու	հավաքածու	1	
9	Փորձանոթ ցենտրիֆուգայի 10մլ	հատ	600	
12	Հավանգակոթ ГОСТ 9147-80 N-2	հատ	7	
13	Հավանգակոթ ГОСТ 9147-80 N-3	հատ	3	
14	Պղտորաչափ (Densi-LA-Meter)	հատ	1	
16	Մակրոպիպետի մեմ-բրանային ֆիլտր	տուփ	1	
17	Մխոցային ֆիլտր	տուփ	1	
18	pH-մետրի էլեկտրոդ Hanna HI1131B	հատ	2	
19	Ջերմաչափ սառնարանային	հատ	10	
20	Կաթոցիչ 3.3մլ	տուփ	2	
23	Լվացման պլաստմասե ամանների հավաքածու	հավաքածու	1	
24	Ջերմաչափ խոնավաչափ պատի	հատ	10	
25	Խոզանակների հավաքածու	հավաքածու	1	
26	Մեմբրանային վակուումային պոմպ	հատ	2	

28	Բյուրս 45X45սմ	հատ	10	
				Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 20 բանկային օրվա ընթացքում 100%
30	Բաժանիչ ձագարների	հավաքածու	1	
34	Չափիչ Գլանների հավաքածու	հավաքածու	1	
35	Բաժակների հավաքածու	հավաքածու	1	
36	Պետրի թաս ապակյա -100մմ տրամագծով	հատ	20	
37	Ֆազայի շշերի հավաքածու	հավաքածու	1	
38	Բյուրս CH - 85/15 (ГОСТ 25336-82)	հատ	10	
39	Կոլբա սննդային միջավայրերի համար 200մլ	տուփ	2	
41	Ռեագենտի նմուշառման համար նախա-տեսված միանգամայա օգտագործման աման	տուփ	1	
42	Էպենդորֆներ-2մլ	տուփ	2	
44	Բյուրետ 10ml	հատ	10	
45	Բյուրետ 25ml	հատ	5	
46	Տարա ախտորոշման/100մլ	հատ	400	
54	Պաշպանիչ ակնոցներ	հատ	10	

ԳՆՈՐԴ

«Ակադեմիկոս է.Գաբրիելյանի անվան դեղերի
և բժշկական տեխնոլոգիաների
փորձագիտական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան 0051,Կոմիտաս 49/4
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015951390100
ՀՎՀՀ 02500292

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիսար» ՍՊԸ
ք. Երևան, Գետառի 4/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 20500224158 1001
ՀՎՀՀ 02555635

/ստորագրություն/
Կ.Տ